

յետոյ զարնումէ թրի բերանին, վեզը կտրելու պէս ձգումէ կտուրիցներս, և այդպէս վերջանումէ հարսանեաց հանդէսը: Խոկ հաւը միւս օրը եփումեն, փեսայն ազապների հետ ուտում և ուրախանումեն, հարսները ամենեին իրաւունք չունին կէսրարի և կեսերոջ հետ խօսելու մինչեռ երեք տղայի մայր չլինին: Կարելի է ասել որ այդ մասին պարսկական բռնութիւնը գէպի կնանիքը բաւականին ներգործած է, դրանց բնաւորութեան մէջ, որ շատ խիստ են վարվում իրանց կանանց հետ, ճանաչելով նրանց իրըև ստրուկ, և ոչ իրանց հաւասար և կենակից, ի հարկէ դա էլ քիչքիչ վերջանալու է:

Գիւղի մէջ ուսումնարան չունին: Երեխայքը կարդումեն կամ Տաթեռու վանքում, որ տեղ կայ մասնաւոր դպրոց, և կամ իրանց քահանաների մօտ:

Եղբափակելով խօսքիս ընթացքը՝ յիշումեմ նոցա ևս որ, երանի թէ բարեհաճէին, ուշք դարձնելու Տաթեռացիք այդ ամենադլաւոր և ամենահարկաւոր առարկայի (դպրոցի) վերաց, հիմնելով իրանց գիւղում մի ծխական դպրոց, որով կատարելու էին դէպի ի իրանց որդիքը ունեցած հայրական պարտքը, և Վեհափառ հօր սուրբ կամքը, որը իր Աթուղիկոսական Գահը բազմած օրից սկսել է աշխատել ամեն մի քաղսքում և գիւղում բանալ տալու դպրոցներ, լաւ հասկացած լինելով այս ազգի այդ մասին ունեցած կարեւորութիւնը և դրանից քաղելու օգուտները: Վեհափառ այրը լաւ է ճանաչում իր պարտաւորութիւնքը և գիտէ տալ որում զհարկն հարկ, և օրում ըզգպատիւ պատիւ, այս ազգի համար մեծ

բաղդաւորութիւն է, որ ունի այսպէս աղգասէր և ուսումնասէր Հովհանք, որը իր անձը ևս չէ խնայում իր հօտի մտաւոր կրթութեան համար, ուրեմն հարկ է աշխատել Վեհափառ. Ճօր սուրբ կամքը կատարելու, որը հայումէ գէպի ի հայկական օգուտը, ի դերև չհանելով նորա յոյսը և աշխատութիւնը, և Վեհափառ այրն էլ տեսնելով իր պարտէզի (Ճայաստանի) պտուղները, կրկնելու է այս խօսքը, թէ « այս ուրախութիւն որ իմն է լցեալ է,, որովհետեւ այդ է նորա սուրբ կամքը, և միակ բաղձանքը: Ուրեմն տայ Աստուածերկար կեանք իր ամէն մի բարի և ազգաշահ դիտաւորութիւնքը կատարելու աղագոււ: —

Կարտողէա Մատուցունց
Եղէտառնորութունց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐԱԴՈՅՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԳԵՏՆԱՇԱՐԺԻ

(Ն-Ռ-Ն-Հ-Ե-Ռ-Հ և Ջ-Շ-Շ)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

Գ-Է-Ռ-Ն-Ա-Լ-Ջ-Ք-Ք Ն-Ռ-Ր-Դ-Ջ-Ջ-Ջ-Ջ-Ջ-Ջ-Ջ

Գետնաշարժի նորագոյն բացազրութեան գաղտնիքը կարելի է հասկանալ գիտնալով որ նորա բուն պատճառը (այսինքն գետնաշարժի) հողագնութէ լուսեւելու իւ այլ արտաքին մի և իցէ ոյժի ազգեցութիւնից է այն է առեժակի և լուսական ոյժէ: Աոր բացազրութիւնը ապացուցան ում է որ գետնաշարժը մի ևնոյն պատ-

ձառից է պատահում, ինչ պատճառից որ պատահում է ծովային վերահսկում և արելադրութեանը*) և թէ լուսնի և արեգակի ձգողական ոյժը մի յայտնի ժամանակակետում այնքան սաստիկ է, որ կարող

(*) Մեր ընթերցողներին կարճառօտ եւ պարզ հասկացողութիւն տալու համար թէ ինչ է ծովի վերահսկում և արելադրութեանը եւ ինչպէս է պատահում, ահա ներկայացնում ենր այս համառօտ ծանօթութիւնը:

Ծովի սովորական հոսումից զատ ովկիանոսի (ծովի) ափերում ամեն տեղ խրաբանչեւր օր նկատում է որ կանոնաւոր կերպով նշանակուած ժամերում ծովի կամ ովկիանոսի եղբքի ջուրը բարձրացնելու է, կամ ուրիշ բառերով ասելով, ծովի ջուրը վերահսկում և այս գործողութիւնը ծովեղբեայ ջրերի մէջ ասուում է ծովային վերահսկում և արեգակի ձգողական ոյժերից որ ամեն ժամանակ ներգործում են հողադիրի վրայ զանազան չափով երբեմն զօրեղ և երբեմն թոյլ: Լուսինը այնքան մօտիկ է հողադիրին որ նորա հեռացնելու ոյժը քաշում կամ բարձրացնում է ովկիանոսի երեսից (մակերեսիցից) մի ահազին քանի հազար վերստ լայնութիւն ունեցող ալիք:

Ուրիմն վերահսկում և լուսնի բարձրանում է լուսնի հողադիրի լուլորը պտտուելուց և լուսնի ձգողական ոյժից: Ի հարկէ որովհետեւ արենի ձգողական ոյժն ևս ներգործում է հողադիրի վերայ հասկանալի է որ եթէ արեն ու լուսինը դառնուեցան հողադիրի մէկ կողմը և այս երեք մարմինների կեղրոններն գտնուեցան մի ուղիղ գծի վրայ. վերահսման և տեղատութեան սաստկութիւնը կհասնի ծայրագոյն աստիճանի: Քան և չորս ժամում պատահում է երկու անգամ վերահսումն և երկու անգամ տեղատութիւն այնպէս որ աւուր մէջ իւրաքանչեւր վեց ժամն երկու անգամ վերահսկում է և երկու անգամ տեղատութիւն

է հողադնտի ներքին հեղուկացած մասերը շարժեցնել — ինչպէս՝ ովկիանոսը շարժում է նոյն ոյժից վերահսման և տեղատուութեան ժամանակ: Թէ ինչպէս և ընչեց է պատահում ծովի վերահսկում և արելադրութեանը մեր ընթերցողներից շատին արդէն յայտնի է, կարծեմ: Այնպէս համարենք թէ ծովը ծածկուած է պինդ՝ և քիչ թէ շատ առաձգական կեղեռվ մի. Ինչպէս ուրեմն պիտի ներգործէ այդ ժամանակ լուսնի ձգողական ոյժը, որից սովորաբար հետեւում է ծովի վերահսումն ու տեղատուութիւնը: Յայտնի բան է ովկիանոսի ալիքը կեղեկի տակից հոսելով կը ձնշեն սաստիկ ուժով դէպ ի վեր այնպէս որ կեղեքը հարկաւ կուռչի ծովային ալիքի հարուածից:

զօր. այսօր 12 ժամին այս ինչ ծովում վերահսում է, նորա հակադիր ծովում տեղատութիւն է լինում. երեկոյին վեց ժամին այն իսկ ծովում է տեղատուութիւն, նորա հակադիր ծովում լինում է վերահսում. զարձեալ գիշերուայ տասներկու ժամին լինում է նոյն ծովում վերահսում, հակադիր ծովում տեղատուութիւն, իսկ վեց ժամում առաւօտեան (հետեւեալ աւուր) այն ծովում լինում է տեղատուութիւն, հակադիր ծովում վերահսումն. Ուրիմն միւնցն ծովում երկու անգամ 24 ժամի մէջ վերահսումն է լինում: երկու անգամ տեղ. . Այս վերահսումն ու տեղատուութիւնը ունի իր առանձին սարսափը սաստկութեան ժամանակ և ունի սովորաբար այն օգուտը, որ վերահսման ժամանակ շատ պակասացւր գետեր լցուում են նորա ալիքներով և գետը այդ միջոցին լինում է յարմար յաջողակ նաւագնացութեան. այդպիսի գետերից են օրինակի համար թայմզ գետը Անդիտում, որոյ վրայ է Լոնգոն մարդաբաղդարը:

ՀԱՂԱԳԻԿԻ ԽՈՐՔՆ և ԷՒՂԵՐ:

Ուսումնականները համաձայն ենթադրութեամբ հաստատում են որ հաղագիկի խորքն մինչև ցայժմ դեռ պնդացած չէ, այլ հեղու-է դրս-նեան և զի՞ "այսինքն" հալուած զանգուածի նման է: Եղել է ժամանակ երբ հողագունդը բոլորովին զնդաձեւ հեղուկ է եղել. կամաց կամաց նորա արտաքին ծալերը պնդացել են "այսինքն" կազմուել է պինդ կեղեւ կամ հողադնդի կտեծը, որ պատում է այժմս նորա ներքին հալուած մասը: Այս պինդ կեղեւ մինչև հիմայ այնքան չէ հաստացել (հողադնդի մեծութեան համեմատ) այսպէս որ երկ ելի երկրագէտների կարծիքով այդ կտեծի կամ կեղեւի հաստութիւնը տասներկու (12) վերստից աւել չէ (42 հազար ոտնաչափ): Պէտք է մտածենք ուրիշն որ հողագունակի կեդրոնին մօտիկ մասերը աւելի հեղուկ (ջրի) են քան զայն մասերը, որոնք կեղեւին կամ կտեծին աւելի մօտ են: "Յմանապէս հողային կեղեւի ներքին երեսը ունի բազմաթիւ մեծամեծ գեղքեր, ցած ու բարձրութիւններ, ուռոյցներ, ելն. որոնք կազմուել են ներքին հեղուկացած մասերի շարժումից և զիմադրութիւնից: Կոյնապէս հասկանալի է որ հեղուկացած կամ հալուած մասի միքանի տեղերը կարող են պնդանալ, միքանին էլ ընդհակառակը պայմաններին մօտիկ տալով պնդանալուց յետոյ կարող են հալել և հեղուկանալ, երբ աւելի հեղուկ և կրակացած մասերը առ ժամանակ կը հոսին և կհակառակեն դրանց:

Եւելի ՅԴԱՂԱԿԻ այժմ ՆԵՐԴԱՇՏ-ՆԵ-ՆԵ:

Յայտնի է որ հողագունդը պատում է արեկի բոլորը և այդ պատելը կամ շարժե-

լը կախումն ունի երկու տեսակ ոյժից, այն է արեկի ձգողական ոյժից և հողագնդի կեդրոնախոյս ոյժից: Այս ոյժերից առաջնը՝ ներգործելով ամրող հողագնակի վրայ, ի հարկէ, ներգործում է նորա իւրաքանչեւր մասնիկների վրայ, նորա իւրաքանչեւր հելլէ (հիւղե) վրայ. բայց որովհետեւ հողային կեղեւը պինդ է, վասնորոյ այս ձգողութիւնը ներգործում է ոչ թէ իւրաքանչեւր մասնիկի վրայ ջոկ ջոկ, որովհետեւ այդ մասնիկներն իրանց մէջ ևս մի ձգողական ոյժ կամ քնական էնէտարայ շաղիտա, այլ ամբողջ հողային զանդուածի վրայ մէկէն: Այդ պատճառաւ հողային կեղեւի մասնիկները չեն կարող ջոկ ջոկ խաղալ և փոխիսել իրանց փոխադարձ տեղը, այլ շարժուում է ամբողջ հողագունարը "այսինքն" ողջ հողային պինդ կեղեւը՝ պահպանելով բոլոր շարժման միջոցին իրա մշտական գնդաձեւ տեսքը: Տողորովին ուրիշ կերպ է ներգործում արեկի ձգողական ոյժը հողագնակի ներքին հեղուկի զանդուածի վրայ: Այդ մասի մասնիկները չունենալով պնդութիւն և նոցա փոխադարձ շաղկապը միմեանց հետ թոյլ լինելով (որովհետեւ հեղուկ են), չեն կարող ցոյց տալ այս սովորական և զօրեղ հակառակութիւնը արեգակի ձգողականութեան դէմ, որը ցոյց է տալիս հողագնդի կեղեւը, վասնորոյ և այդ մասնիկները անշուշտ նուաճում են յիշեալ ոյժին թէ որ հողագնդի կեղեւը չկապէր նրանց առաջը "այսինքն" արգելք ըսլիներ նոցա յառաջ խաղալուն:

Թէ ՅՆԱՂԵՆ է պատահանում գետաւալով:

ՀՈՂԱԳՆԴԻ հեղուկ կամ հալուած մասերի արեկին աւելի մօտիկները ձգուում

են դէպի ի արել առաւել ոյժով քան զաւելի հեռաւորները և ձգողականութեան ներգործութեամբ "այսինքն" դիմելով դէպի արել՝ ձնշում են հողագնդի կեղեկի հակագիր պինդ մասերը, որոնք հակառակում են այս ձնշմանը իրանց ծանրութեան (կշեռքին) և իրանց փոխադարձ շաղկապի ոյժին համեմատ: Ուրեմն մենք ունենք երկու հակառել ներդուժող ոյժել "այսինքն" սոսութիւննեայ ալիւի ճնշումը և հողայն կեղել դիմարդութիւնը "այսինքն անշարժութիւն կը լինի այն ժամանակ, երբ այդ երկու ոյժը փոխադարձորար մէկը միւսին ոչնչացնում են "այսինքն" ելք որ նույն հաշտատը կամ համապատ են մէջ: Խակ պարզ բան է, որ ենի հողայն կեղել դիմարդութիւնը հաշտաժ մասի ճնշումը նոյն է, ուրեմն հողայն կեղել ներքին ձնշման սաստիութիւնից պիտի ուռչի, բարձրանայ, միով բանիւ, ովք շարժել:

Երեւ դէրժը շորժի ստորին-նետն նկատմամբ:

Ուրեմն արեի ձգողական ոյժի ազգեցութիւնը հողագնդի վրայ երեք միազօր կոմ միատեսակ լինել չէ կարող, որովհետեւ արեի և հողագնդի մէջ տեղի հեռաւորութիւնը միշտ միաչափ չէ: Հողագնդի արեից ամենափոքրիկ հեռաւորութիւնը ունենալու ժամանակ "այսինքն" դեկտեմբերի 31 ին, հողագնդի ձգողական ոյժը ուրեմն և նորա ներքին հալուած մասերի վրայ ունեցած ազգեցութիւնը աւելի շատ է և զօրեղ: Խակ երբ որ հողագունդը արեից ամենահեռու կէտի վրայ կգտնուի "այսինքն" յուլիսի մէկին, այն ժամանակ այդ ոյժն ու ազգեցութիւնը ամենից թոյլ է և պակաս:

Լուսնի Յժողական-նիւնը:

Բայց հողագունդը արեի ձգողութիւնից զատ լուսնի ձգողութեանն էլ ենթակայ և թէպէտ համեմատաբար լուսինը շատ փոքր է, այնու ամենայնիւ նորա ազգեցութիւնը հողագնդի ստորերկրեայ հեղուկ մասերի վրայ աւելի զօրեղ է և շատ քան զարեկինը:

Լուսնի և արեւի Յժողական-նիւնը միտան:

Ուրեմն արեի ձգողական ոյժից գոյացած հեղուկ զանգուածի ալեքը պակասէ լուսնի ձգողական ոյժից գոյացած մի և նոյն զանգուածի ալեքից: Բայց արեի ամենատկար ազգեցութիւնն էլ շատ հարկաւոր է այն վայրկեանում՝ երբ արեի և լուսնի ձգողութիւնը նոցա փոխադարձ գրութեան համեմատ՝ գումարուելով, լինում են իրը թէ մէկ ոյժ, խակ այս պատահում է այն վայրկեաններում երբ լուսինը գտնուումէ՝ արեն ու հողագունդը կապող ուղեղ գծի վրայ, կամ ինչպէս ասում են երբ լուսնը գոյնուումէ արեւի և հողագունդի մէջ արեւ և այս երեք մարմինների կեղրոնները գտնուում են մէկ ուղեղ գծի վրայ: Թէ այս գրութեան մէջ, ինչպէս յայտնի է, պատահում է նոյնպէս արեի խաւարումը և արեի ու լուսնի ձգողական ոյժը համանում է ծայրագոյն աստիճանին, բայց որովհետեւ այդ ևս ունի զեռ մի քանի յայտնի փոփոխութիւններ "այսինքն" կպատահի որ բոլոր այդ երեք մարմիններն էլ կգտնուին միենոյն գրութեան մէջ, երբ արեգակն ու լուսինը հողագնդից ամենահեռու կամ ամենահօտիկ են: Եյս վերջին դէպքում առաջին երկու մարմինների (արեգակի և լուսնի) ձգողութան ոյժը,

որ ներգործում է երրորդի վրայ (երկրագնդի), պէտք է հասնի ուրեմն ծայրագոյն սաստկութեան (ամենաշատ չափի) և ստորերկեայ հալուած մասերի՝ հողային կեղեի վրայ ցոյց տուած ձնշումը նմանապէս հասնում է ծայրագոյն աստիճան։

Երեկի և լուսնի ձգողական ոյժը կարող է ներգործել հողագնդի վրայ ինչպէս երկու ոյժերի գումար կամ հանգանակումն ոչ միայն վերոյիշեալ զրութիւնն ունենալու միջոցին, թէև արեն ու լուսինը չեն գտնուում մէկ ուղեղ գծի վրայ հողագնդի հետ միասին, այլ անգամ երբ նոքա գտնուում են հողագնդի մէկ կողմը։ Եյս գէպըում ես յիշեալ երկու մարմինների երրորդի վրայ ցոյց տուած ձգողութիւնը աւելի սաստիկ կլինի քան զայն ձգողութիւնը, որը ցոյց է տալիս նոցանից մէկը ջոկ (օրոշակի) և այդ միջոցին ձգողական ոյժի սաստկութեան աստիճանը ի հարկ է կախումն ունի այդ երեք մարմինների փոխադարձ զրութիւնից։ Վ երջապէս մինչեւ անգամ առանց արեկի գործակցութեան, լուսնի ձգողական ոյժը կարող է այս մարմնի (լուսնի) յայտնի և յարմարաւոր զրութեանը նայելով հողագնդի վերաբերութեամբ՝ հողագնդի հալուած մասի մէջ ալիքներ յարուցանել և ենէ այս հոսութիւնը ոյժը և նորա ցոյց տուած ձնշումը հողային կեղեւի վրայ սորտ ծանրութեանից կամ իլլուստրացիայից և ամբութեանից կամ պնդութիւնից շատ է, այն ժամանակ ենիւյն կապատճիկ գետնալորժ։ Հողային կեղեի հակագիր ոյժը կամ գիմաղբութիւնը կարող է լինել նորա մասնիկների պնդութիւնից, որը հողագնդի զանազան մասերի մէջ բնաւ միանեսակ չէ։ Հողային կե-

ղեի այն մասերը, որոնք երկրիս ամուր տեղերն են և ասուում են ցամատ, ռւնին աւելի մեծ ծանրութիւն կամ կշեռք, աւելի մեծ պնդութիւն, քան զայն մասերը, որոնք ասուում են ովկանոս։ Աւելին հալուած մասի գէպ ի ցամաքը դիմող հոսումը աւելի մեծ հակագիր ոյժի կամ հակառակութեան կհանդիպափ քան զայն կանոնաւոր ալիքը (հոսումը), որը զիպչում է հողային կեղեի այն մասերին, որոնք ասուում են ովկանոս։ Իսայց ցամաքն էլ ամեն աեղ չունի այնպիսի միատեսակ ամրութիւն՝ որ կախումն ունենայ զեանի ծալերի (ղաթերի) և քարեղենի մասերի փոխադարձ զրութիւնից և ձգողութիւնից։ Դրանից զատ կան աեղեր, որ աեղ հողային կեղեր ունի շատ մեծամեծ այրեր և անջրապեաններ, վասնորոյ այս սպայմանների մէջ ներքին ոյժին հակառակելը կարող է լինել աննշան։

Ուրեմն մենք տեսնում ենք երկու ոյժերի մրցումն կամ հակառակութիւն այն է հողագնդի սոսութերեայ հալութեամբ ալիքի և հողային կեղեւի դէմոդրուլ (հակառակող) ոյժերը։ Եթէ այս վերջին ոյժը "այսինքն" դէմոդրուլ ոյժը առաջնից "այսինքն" ալիքի ոյժից—շատ է, այն ժամանակ հողային կեղեր կմնայ անշարժ ու հանգարտ, եթէ ընդհակառակը առաջնին երկրորդինից պակաս է, այն ժամանակ հողային կեղեր բարձրանում է, օրորուում է և լինում է գէտնալորժ և կամ ձեղքուում է նոյն կեղեր, կամ բացուում է, հրաբուզիս, դուրս թափելով լեռան գաղաթից հողային հալուած մասերը։

Ըստ մեջ անցուելի մէկնութիւնը նորագոյն բա-
յառիւն-նեան ճարտար:

Մնում է մեղքացադրել թէ գետա-
շարժի բոլոր այն ձևերը կամ նշանները,
որոնք վերը նկարագրել ենք համառօտա-
կի, ի՞նչպէս պէտք է մեկնել այս նոր բա-
ցադրութեան մտքով:

Ո-ՂԱՅԻ+ ՀԱՐԺ:

Որովհեաւ ներքին հալուած մասերի
հոսումը բարձրացնում է հողային կե-
ղեր, ուրեմն պարզ բան է որ առաջին
ցնցումը "այսինքն" գետաշարժի սկզբնա-
ւորութիւնը կզգացուի վարից վեր հա-
րուածի կամ հրնաց (բօթոցի) նման: Այս
հարուածը առիս է յատկապէս ստորերկ-
րեց ալիքի գագաթը, բայց որովհեաւ
ալիքն ինքը ուրեմն և նորա գագաթը յա-
ռաջ է շարժում արագութեամբ, վասնո-
րոյ կզգացուի մի քանի իրար յետեւէ
յայնի ճանապարհաւ ընթացող հա-
րուածներ: Այս հարուածները քանի
գնում նոր շարժումներ են պատճառում
հողային կեղեւի մի քանի մասերին և ալի-
քի նման շարժեցնում են այդ հողային
մասերը: Այս բացադրութիւնը կարելի է
ապացուցանել զանազան փորձերով:

Ը-ԱՐԺԻ+ ՊԼԱՆ-ԹԻ-ՆԸ:

Որովհեաւ հալուած ալիքը բաւակա-
նաչափ մեծ արագութեամբ է շարժում,
վասնորոյ հարուածները լինում են կար-
ճատե բայց շատ անգամ այդ հարուած-
ները կրկնուում են շուա շուա և շտապ
շաաս այն պատճառաւ որ ալիքի գագաթ-
ները կամ ինչպէս սովորաբար ասում են
նորա մէջ+ը անընդհատ վերանորոգուում

են և կրկնուում ծովային ալիքի նման և
եթէ լուսնի և արեւի յարմար զիրք ունե-
նալու երեսէն նոցա ձգողական ոյժը աւե-
լի զօրեղ է ներգործում հալուած մասե-
րի վրայ, ուրեմն ալիքն էլ չեն կարող իրանց
սովորական վիճակն ունենալ, վասնորոյ
ցնցումներն էլ կամ հողի շարժումը կի-
նի երկարատե այսինքն" նոքա կշարու-
նակուեն նոցա սկզբնապատճառի անհե-
տանալուց յետոյ ևս:

Ը-ԱՐԺԻ+ ՃԱՆԱՊԱՐՀԸ:

Գետնաշարժի ճանապարհը կախումն
ունի հենց հալուած ալիքի ուղղութիւ-
նից, որը հետեւում է արեւելքից արե-
մուտք այն պատճառաւ որ հողագնդի զա-
նաղան կետերը կամ մասնիկները այդ ճա-
նապարհաւ են հետեւում արեւի և լուսնի
ձգողական ոյժին: Հալուած կամ հեղուկ
մասերը արեւելքի մի որ և իցէ կետին հա-
մեմատ զիրք ունենալով անպատճառ
քաշուում է դեպի արեւմուտք, որովհե-
տեւ հողագնտի շարժումի և լուսնի կամ
արեւի ձգողականութեան պատճառաւ հո-
ղագնտի արեւմուեան հեռաւոր կետերը կը
մօտենան: Բայց այս գնաւոր ճանապար-
հը շատ անգամ փոխուում է:

Ը-ԱՐԺԻ+ ՍԱԿԱՐԻ-ԹԻ-ՆԸ:

Հեղուկացած մասի ալիքը կարող է
հանդիպել իրա ճանապարհի վրայ աւելի
պինդ ծանրակշիռ մասերին այդ պատ-
ճառաւ էլ նորա սկզբնական ուղղաձիք
ճնշումը վարից վեր փոխուում է և այս
ոյժի մէկ մասը երկրորդական ճնշման տեղ
է գործադրում մի ու իցէ կողմի վրայ:
Հողային կեղեւի կազմուածքն ու անդու-

թիւնն էլ կարող են երբեմն քիչթէ շատ փոխել հեղուկացած ալիքի ճանապարհը և այս արտաքին ու ներքին պատճառներով է բացադրուում թէ հեղուկացած ալիքը կամ գետնաշարժը ինչպէս կարող է զանազան ճանապարհներ ունենալ։ Ամենասասարիկ գետնաշարժերը աւելի թեթև գետնաշարժից աւել կարող են պահպանել մեծ ձշութեամբ իրանց դիեաւոր ճանապարհը։ Օրինակ՝ 1868թուի գետնաշարժը՝ որ Երիկում սկսուեցաւ, հասաւ մինչև Լիտլտոն Կոր Օկլանդիայի քաղաքը արևելքից արևմուտք 19ը ժամում։

Շարժի արագութեանը։

Հալուած ալիքի արագութիւնը կախումն ունի՝ առաջինը լուսնի խկական և կարծիքաւոր (երեցող) շարժումից "այսինքն լուսնի պայութքի արագութիւնից և երկրագնդի պայութքի արագութիւնից իրանց առանցներու շուրջը, երկրորդ՝ աւելքի իրան ոյժից ու մեծութիւնից։ Այս արագութեան չափը կարելի է հշշութեամբ իմանալ հաշուելով՝ որից մենք զիտենք որ գետնաշարժը մէկ ըոսդէում անցնում է համարեայ երեք և կէս մզոնաչափ (37 հազար քայլի չափ) տարածութիւն։ Օսովային տեղերի համար գետնաշարժի արագութիւնը միևնույն է ինչ արագութեամբ որ անց է կենում ծովային վերահսկման և տեղատուութեան աւելքը։ Միայն այս տեսակ արագութեամբ կարող են ընթանալ միայն սաստիկ գետնաշարժերը, իսկ թեթև գետնաշարժելը շատ անգամ կախումն ունին գետնի փոփոխական պայմաններից ինչպէս և ճանապարհի հանգամանելքներին, ոյժ՝ հողացին կեղեկի հակազիր ոյժից գերազանց։ Այդ պատճառաւ գետնաշարժի շրջօփը զիացնումէ ցուրտ զօտի երկիրներուն էլ թէն նոցա մեջ գետնաշարժը շատ սակաւ և աննշան է քան զայրեցած զօտի և բարեխառն զօտի երկիրներունը։

Շարժի գլուխուուր աւելուը։

Վեր բացատրութեան մաքին նայելով այն տեղերը գլխաւորապէս պիտի պատահի գետնաշարժ, որ տեղ գցանում են հալուած ալիքների գագաթները։ Այդ ալիքն կախումն ունին ձգող մարմնու դրութիւնից, ուրեմն այս ալիքի գագաթները միշտ պիտի գանուին այն տեղերում որ տեղ արեն ու լուսինը գտնուում են զագաթնակետում, (զլաներիս վրէն, զէնիտում): Հողագնդի այն գօտիում կամ մասում, որը գտնուում է 28½ տարածութեան վրայ հասարակածի երկու կողմից հաշուելով՝ լուսինը կարող է զրանուել գագաթնակետում հողագնափի ու կիցէ մասի վրէն։ Համարեամ միևնույն գօտիում այն է 23½ տարածութեան վրայ հասարակածի երկու կողմից հաշուելով արեն էլ կարող է գանուել գագաթնակետում մի ու և իցէ մասի վրէն։ Աւրեմն այս բացադրութեան մաքով ևս — այլ բացադրութեան միացնութիւն միւս զօտի միւս զօտիներից աւելի շատ պիտի պատահի գետնաշարժ։ Բայց ոչ թէ միայն հալուած ալիքի գագաթը, այլ միւս մասերն ևս կարող են ունենալ, մտիկ տալով հանգամանելքներին, ոյժ՝ հողացին կեղեկի հակազիր ոյժից գերազանց։ Այդ պատճառաւ գետնաշարժի շրջօփը զիացնումէ ցուրտ զօտի երկիրներուն էլ թէն նոցա մեջ գետնաշարժը շատ սակաւ և աննշան է քան զայրեցած զօտի և բարեխառն զօտի երկիրներունը։

Այժման և անցեալ ժամանակների շարժերը՝ Արովշետե այնքան շատ է պատահում և այնքան սաստիկ է լինում գետնաշարժը, որքան թոյլ է լինում հողային կեղեքը,

ուստի հասկանալի է որ հին ժամանակ-ներում, երբ հողային կեղեք հիմիկուանից շատ բարակ էր և թոյլ, զետնաշարժը պատահում էր շուտ շուտ և աւելի սաստկութեամբ։ Ալինի ժամանակ երբ հողային կեղեք հիմիկուանից շատ հաստ կլինի և գետնաշարժն էլ կապատահի աւելի սակաւ։

Ը արժի դիմասոր ժամանակը։

«Օռվի վերահսումն աւելի սաստիկ է լինում այն ժամանակ, երբ լուսնի ձգողական ոյժի հետ միանում է և արեւի ձգողական ոյժը՝ "այսինքն" մջնալունի և նոր լուսնի ժամանակ։ Վ. յդ ժամանակներում և այդ պատճառներից խսկապէս աւելի սաստիկ է լինում հողագնտի հալուածմասի հոսումն "այսինքն" գետնաշարժը։

Ը արժի դիմասոր պայմանները։

Աւրեմն ծովային վերահսումն և գետնա-շարժի—որը կարելի է անուանել հողային ոլոնդուածի անսովոր հոսումն—աւելի յար-մար միջոցներն են՝ ա) լուսնի հողագնդին ամենամօտիկ ժամանակ, բ) միջնալուսնի և նոր լուսնի ժամանակ, գ) երբ լուսինը հասարակածի վրայ է դանուում և դ) երբ լուսինն ու արեգակը միատեսակ խո-նարհումն (գելինացիայ) ունին։ Վ. յս մի-ջոցներից ամեն մէկը կարող է պատահել աւելի յարմարաւոր պայմանների ժամա-նակ և տալիս է հաստատուն նշան գետ-նաշարժի մասին։ Տայց լինումէ որ սրան-ցից մի քանիսը կամ երրեմն բոլորն ի միա-սին են պատահում, այն ժամանակ գետ-նաշարժն անկարծիք է և անշուշտ։ Ինչ-պէս օրինակի համար թէ լուսնի և թէ արեւի խաւարման միջոցին պատահում են (բ) և (դ) պատճառները, լուսնի և արեւի

ամբողջ խաւարման միջոցին պատահում են առաջին երեք պատճառները և վեր-ջապէս չափաւոր և ամբողջ խաւարման ժամանակ—բոլոր չորս պատճառներն էլ։ Ուրեմն մեր բացատրութեան համեմատ գետնաշարժը սպասել կարելի է արեւի կամ լուսնի խաւարման միջոցին և ինչ-քան աւել տե՛կ խաւարումը ևս սաստիկ կլինի, այնքան աւել մենք կարող ենք հա-ւատալ և սպասել գետնաշարժի պատա-հելուն։ Դիտողութիւնները ամենածիշդ կերպով տպացուցին և հաստատեցին այս բացատրութեան ամեն մէկ եղբակա-ցութիւնը։ Ը առ զարմանալի փաստ է դորա համար 1868 թուի օդոստ. 13—19ը տեղող գետնաշարժը, ինչպէս յայտ-նի է նոյն օդոստ. 18ին պատահեցաւ արեւի ամենանշանաւոր և մեծ խաւարում-ներից մէկը—որը որ սովորականից դուրս երկար տեկեց այն պատճառաւ որ յիշեալ չորս պատճառներն էլ հետն էին միենոյն ժամանակ՝ այնպէս որ այդ տեսակ խաւա-րումն հազարաւոր տարիներն անգամ մի հազիւ պատահի։ Յայտնի է նոյնպէս այդ միջոցներում պատահած գետնաշարժը ամենից սարսափելին էր։

Արդարածն անցուելի բացարկութեանը։

Դժուար չէ նոր բացատրութեան զօ-րութեամբ մեկնել բոլոր այն մնացած անցքերը, որոնք պատահում են գետնա-շարժի ժամանակի ինչպէս՝ օրինակի հա-մար ծովային ալիքի սովորականից դուրս բարձրանալը—որը ոչ թէ այս բացատրու-թեան զօրութեամբ կարող է պատահել, այլ անշուշտ պէտք է պատահի։ Լուսնի ձգողական ոյժից ստորերկրեայ հալուած

մասերը ալեկոծում են, նոյնպէս ալեկո-
կոծում է ծովը նոյն ոյժից, ուրեմն լուս-
նի ձգողական ոյժի ներգործութեամբ եր-
կու մեծ ալեք՝ սուրբիչի տիկունութեամբ և ծովա-
յին միասին ներգործելով հասարակ ծո-
վային ալեքից ուժեղ են և սարսափելի։
Եյս երկու ալեքը ներգործում են ինչպէս
մէկ ալեք, նոքա զուգահեռաբար են շար-
ժում միասին և միատեսակ արագութեամբ
և նոցա բարձրութիւնը այնքան շատ է
ինչքան մեծ է ստորերկրեայ ալեքը։

Նոյնպէս հեշտ է բացատրել գետնի
պատառուելը կամ ճեղքերի բացուելը,
որոնք անպատճառ պատահել կարող են,
եթէ ստորերկրեայ ալեքի ոյժը հողային
կեղեի հանձների շաղկառից շատ է։ Ըստ
անդամ գետինը յայտնի տարածութեան
վրայ բարձրանում է և բարձրացած մնում
երկար ժամանակ, բայց գետինը մտիկ տա-
լով նորա կազմուածքին երեւմն կարող է
բարձրանալ և պատռել կամ տրաքել,
այդ միջոցին սովորաբար բացուում է հոս-
քուղիս։ Գետնաշարժի ժամանակ ծովի ե-
րեսին երեւում են նոր կղզիներ, որոնց
պատճառը ծովի յատակի բարձրանալն է,
իսկ նոցա անհետանալը ծովի երեսից՝ գետ-
նի կամ յատակի ցածանալուց է։ Բայց
այսպիսի անցքեր պատահում են ոչ միայն
գետնի երեսին այլ գետնի տակ ևս։ Հա-
լուած ալեքը իր շարժման ժամանակ գետ-
նի տակ աւելի պինդ կամ թանձր նիւթե-
րի հանդիպելով նոյնպէս ողողում, սըր-
բում, ջարդում և տեղափոխում են
թանձր մասերը, թափում են խոր ան-
դունդների կամ անջրպետների մէջ, ո-
րոնք շատ կարելի է թէ պարփակում են
իրանց մէջ կազեղէն նիւթեր են։ Եյս

կազեղէն նիւթերի շարժ գալը պինդ մա-
սերի ջարդուելը և տեղափոխուելն է իս-
կապէս այն ստորերկրեայ որոտումն ու
աղմաւկը, այն գղրդոցն ու սարսափելի գո-
ռոցը, որոնք սովորաբար լսում ենք դետ-
նաշարժի ժամանակ։

Կողագոյն բացատրութեան հեղինակն և հա-
մառօպ պատճենելունը։

Եյս բացատրութիւնը — որն արդէն հա-
մառօտակի մեկնեցինք այս յօդուածի
մէջ, Բուդոլֆ Ֆայլը մտաց ծնունդն է։
Ու (բացատրութիւնը) առաջին անդամ
ի լոյս ելաւ նորա մի գրուածքի մէջ գետ-
նաշարժի և հրաբուղիների "փաստեր" ա-
նունով։ Եյս բացատրութեան մտքին
համեմատ նա գուշակեց իրա "Ակրիու"
անուն աստղաբաշխական ամսագրի մէջ
1868 թուի սարսափելի գետնաշարժի մա-
սին և ծշդութեամբ որոշեց նորա ժամա-
նակը։ 1869 թուին փետրվարի համա-
րումնա հրատարակեց՝ որ "մարտի 28 ին
և մարտի 1 ին արեւելքում պէտք է լինի
սաստիկ գետնաշարժ, որը կտարածուի
փաքը Եսիայի մէջ և նըրանից հեռու"։
Երդարև մարտի 1 ին Եթենքում լսուաւ
առաջին սաստիկ հարուածը և ստորերկ-
րեայ ալեքի ճնշումը այնքան շատ էր որ
Ծալիրիում անդամ զգալի եղաւ։ Նոյն-
պէս Ֆայլը նախագուշակեց այնուհետեւ
մի քանի շարժեր ևս զարմանալի ծշդու-
թեամբ։ Խռուի թէ այս բացատրութիւնը
որ այդպէս զարմանալի կերպով հաստա-
տուումէ զանազան փաստերով արժանի
է լիուլի ընդունելութեան և մտառու-
եան։